

## **Պողոսյան Սյուզաննա Ստյոպայի**

Ծնվել է 17.03.1980թ. Երևան քաղաքում: 1997 թվականին գերազանցությամբ ավարտել է Երևանի թիվ 113 դպրոցը՝ շնորհիվել է ոսկե մեդալ: 2001 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2003թ.՝ մագիստրատուրան: 2009թ. սովորել է «Թաֆթա» համալսարանի «Ֆլետչեր»-ի դիվանագիտության և իրավունքի դպրոցում, մասնակցել է «Միջազգային իրավունք և դիվանագիտություն» խորագրով դասընթացին: 2001-2004թթ. աշխատել է «Ֆուլ Պրես» ՍՊԸ-ում՝ իրավաբան: 2004-2005թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչությունում՝ կամավոր: 2005-2007թթ.՝ ՀՀ արդարատության նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչությունում՝ որպես առաջատար մասնագետ: 2007-2008թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական: 2009-2011թթ. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմում՝ իրավաբանական բաժնի պետ: 2012-2017թթ. «Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու: 2013թ.-ից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ՝ փաստաբան: 2014-2017թթ «Լեքսարթ» փաստաբանական գրասենյակ ՍՊԸ-ում՝ որպես տնօրեն: 2017թ հոկտեմբերի 16-ից աշխատել է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց Էթիկայի հանձնաժողովի աշխատակազմում՝ որպես իրավաբանական և վարույթների վարչության պետ: 2018թ. օգոստոսի 28-ից՝ աշխատում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց Էթիկայի հանձնաժողովի Գլխավոր քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար: Մասնակցել է մասնագիտական մրցույթային դասընթացների՝ 2004թ-ին ՀՀ Կենտրոնական բանկում՝ «Կենտրոնական բանկ ներածական դասընթացին»: 2010թ. մասնակցել է «Անհատական տվյալների պաշտպանությունը Հայաստանում և Եվրոպական Միությունը», Տնտեսական քաղաքականության և իրավական հարցերով հայ-եվրոպական խորհրդատվության կենտրոնի /AEPLAC/ մրցույթային դասընթացներին: 2010թ. Ժնևի համալսարանում /The Graduate Institute Geneva/ մասնակցել է «Միջազգային հարաբերություններ, մարդու միջազգային իրավունքներ և շրջակա միջավայր», 2017թ. Ֆրանսիայում՝ «Մարդու

իրավունքների Եվրապական կոնվենցիա>>, Ստրասբուրգում՝ <<Բաց հասարակության հիմնադրամ>> /OSI, CPI/ մրցույթային դասընթացներին: Տիրապետում է անգլերեն և ռուսերեն լեզուներին: Ամուսնացած է, ունի երկու երեխա: